ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.07.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/81

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Գալիմա» ՍՊԸ-ի տնօրեն՝

Դ. Հովհաննիսյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական N 03Ա938152)

Ներկայացուցիչ՝ Հ. Ղազարյանի (լիազորագիր, տրված՝ 07.06.2019թ.)

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ՝

Ա. Համբարձումյանի (լիազորագիր, տրված՝ 07.06.2019թ.)

Լ. Հովհաննիսյանի (լիազորագիր, տրված՝ 07.06.2019թ.)

Հ. Ազատյանի (լիազորագիր, տրված՝ 07.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.06.2019թ. թիվ 26/26-1/9252-2019 գրությամբ «Գալիմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 29.05.2019թ. թիվ 01/61-10033 գրության հիման վրա, 04.06.2019թ. թիվ 26/26-1/9252-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Գալիմա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գալիմա» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գալիմա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Գնորդ) և «Գալիմա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Վաճառող) միջև 15.05.2019թ կնքված N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում 16.05.2019-26.05.2019թթ. ընկած ժամանակահատվածում Վաճառողի կողմից պետք է մատակարարվեր 3200 սննդի փաթեթ: Համաձայն Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի Վաճառողը պարտավոր է նախապես համաձայնեցնել ամբողջ գործընթացը Պատվիրատուի հետ (ապրանքների ընտրում, փորձանմուշների տրամադրում, մատակարարում):

2019թ. մայիսի 3-ին Երևանի քաղաքապետարանում կայացած Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հր. Սարգսյանի կողմից անցկացված ծրագրին մասնակից բոլոր կողմերի մասնակցությամբ խորհրդակցության ընթացքում քննարկվել և ձեռք է բերվել պայմանավորվածություն 2019թ. մայիսի 17-ին և 18-ին Պայմանագրով նախատեսված սննդի փաթեթների մատակարարման վերաբերյալ, համաձայն որի նշված օրերին մատակարարվելիք սննդի փաթեթների ծավալների վերաբերյալ Վաճառողը պետք է տեղեկացվեր մատակարարումից 10 (տասը) օր առաջ:

Հիմք ընդունելով Պայմանագրով նախատեսված մատակարարման ենթակա ծավալները, ժամանակին մատակարարումներն իրականացնելու նպատակով Վաճառողի կողմից նախապես գնվել և պահեստավորվել են համապատասխան քանակի հյութ, սուրճ,

ջուր և անձեռոցիկ (յուրաքանչյուրից 3200 հատ), իսկ թարմ և առնվազն 48 ժամ պիտանելիության ժամկետներ ունեցող սենդվիչներ և թխվածքաբլիթներ մատակարարելու նպատակով թխվածքաբլիթները և սենդվիչների պատրաստման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերումները իրականացվել են վերջին օրերին՝ սկսած 2019թ. մայիսի 15-ից:

Սննդի փաթեթների պատվերի վերջնական թիվը կազմել է 2500 հատ Պայմանագրով նախատեսված 3200 հատի փոխարեն, որով ևս ֆինանսական վնասներ է պատճառվել Վաճառողին:

Մատակարարումները ժամանակին և պատշաճ որակով իրականացնելու նպատակով Վաճառողն անընդհատ փորձել է քաղաքապետարանի համապատասխան աշխատակցից ճշտել մատակարարվելիք սննդի փաթեթների ծավալները, սակայն ծավալները նրան տրամադրվել են միայն 2019թ մայիսի 15-ին ժամը 11:28, համաձայն որի 17.05.2019թ.-ին մատակարարվելիք ծավալը (ըստ ծնողների թվի) կազմել է 787 փաթեթ, իսկ 18.05.2019թ.-ի համար 263 փաթեթ, որի ընդհանուր գումարը հավասար է 1050-ի:

Վաճառողի կողմից ձեռք են բերվել պայմանավորվածություններ և նույն օրը՝ 2019թ մայիսի 15-ին իրականացվել է 1050 փաթեթի համար անհրաժեշտ սենդվիչների պատրաստման նյութերի և թխվածքաբլիթների ձեռքբերում, սակայն հեռախոսային խոսակցության ժամանակ պարզվել է որ այդ թիվը պետք է բազմապատկվի երկուսով, քանի որ մասնակիցների սնունդը պետք է տրամադրվեր ինչպես գնալուց, այնպես էլ վերադառնալիս: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը Վաճառողի կողմից 2019թ մայիսի 16-ի առավոտյան (քանի որ 15-ին արդեն իսկ հնարավոր չէր) իրականացվում են ևս նույն քանակի ձեռքբերումներ և քանի որ Վաճառողը սենդվիչների պատրաստման համար այլ իրավաբանական անձի հետ ձեռք էր բերել պայմանավորվածություններ, (մասնավորապես՝ համաձայն կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի սենդվիչի նյութերը տրամադրվում են Վաճառողի կողմից, իսկ այդ նյութերով սենդվիչների պատրաստման ծառայությունները իրականացվում են տվյալ կազմակերպության կողմից) Վաճառողը փորձում է այդ քանակի սենդվիչների պատրաստումը ևս իրագործել: 2019թ մայիսի 16-ին ժամը 13:16 քաղաքապետարանի կողմից Վաճառողի էլ փոստի հասցեին ուղարկվում է նոր նամակ, նախկին ծավալների ոչ էական փոփոխմամբ: 2019թ մայիսի 17-ին ժամը 14:00-15:00 սահմաններում քաղաքապետարանի համապատասխան

աշխատակիցը հեռախոսազանգի միջոցով Վաճառողին խնդրում է ևս 370 փաթեթ ավելացնել: Վաճառողը փորձելով աջակցել քաղաքապետարանին համաձայնում է այդ պատվերը ևս իրականացնել և կրելով ֆինանսական վնասներ շուկայից ձեռք է բերում համապատասխան նյութերը և անում հնարավորինը փորձելով ապահովել սննդի մատակարարումը մինչև ավտոբուսի մեկնումը: Վաճառողը և սենդվիչները պատրաստող կազմակերպության ամբողջ անձնակազմը բարձր դասելով զինվորների և նրանց ծնողների գործոնը, չխնայելով ֆինանսական և այլ ռեսուրսներ, մինչև ժամը 23:00 փորձում են իրականացնել ամբողջ ծավալի պատրաստումը և մատակարարումը, սակայն մինչև նշված ժամը ստացվում է մատակարարել միայն 1744 փաթեթը, իսկ 200 փաթեթի հանձնումը իրականացվում է Վարդենիսում՝ գիշերը ժամը 01:00-02:00 ընկած ժամանակահատվածում:

2019թ. մայիսի 17-ին ժամը 23:30-ի սահմաններում քաղաքապետարանի աշխատակիցների այցելել են Վաճառողի պահեստ և գրասենյակ, որտեղ տեսնելով արկղեր, երշիկի, պանրի և այլ մնացորդներ եզրակացրել են, որ սենդվիչները պատրաստվում են տվյալ վայրում, սակայն տվյալ վայրում իրակացվում էր սննդի ընդհանուր փաթեթի կազմումը և դասավորումը, բեռնումը և մատակարարումը, այսինքն սենդվիչները պատրաստող կազմակերպությունից պահեստ էր ուղարկվում արդեն պատրաստված սենդվիչները, որոնք դրվելով ընդհանուր սննդի փաթեթի մեջ ներառելով հյութ, թխվածքաբլիթ, սուրճ, ջուր և անձեռոցիկ բեռնվում էին համապատասխան մեքենաները և ուղարկվում Գնորդին:

2019թ. մայիսի 17-ի գիշերը, մոտ ժամը 01:00-ի սահմաններում, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքի սոցիալական ապահովության վարչության պետ՝ Ռ. Զաքարյանի հետ տեղի ունեցած հեռախոսազրույցի համաձայն (վերջինիս կողմից հաստատվում է մայիսի 18-ի պատվերը) 2019թ մայիսի 18-ի առավոտյան ժամը 07:00-ին Վաճառողի կողմից մատակարվում և ավտոբուսներում բաշխվում են համապատասխան ծավալի սննդի փաթեթներ, սակայն Երևանի քաղաքապետի տեղակալ Հր. Սարգսյանի հրահանգով (առանց տվյալ խմբաքանակի համապատասխանությունը ստուգելու) այդ ապրանքները հետ են հավաքվում ավտոբուսներից և վերադարձվում

Վաճառողին հիմնավորելով, որ դրանք պատրաստված են ոչ սանիտարահիգիենիկ պայմաններում և չեն կարող ընդունվել:

Այսպիսով, կրելով ֆինանսական վնասներ, բայց հաշվի առնելով զինվորների և նրանց ծնողների գործոնը Վաճառողի կողմից արվել է հնարավորինը սահմանված ժամկետներում մատակարարումներն ապահովելու համար, սակայն քաղաքապետարանի կողմից սխալ կազմակերպված գործողությունների հետևանքով այսօր փորձ է կատարվում ոտնահարել Վաճառողի բարի համբավը և ամբողջ մեղքը գցել Ընկերության վրա:

Անհասկանալի է նաև Գնորդի պահվածքը հետևյալ դրվագներում՝

1.Գնորդի կողմից ներկայացվում է, որ սնունդը պատրաստվել է ոչ սանիտարահիգիենիկ պայմաններում, որից հետո Վարդենիսում գիշերը ժամը 01:00-02:00 ընկած ժամանակահատվածում ընդունում է 200 հատ սննդի փաթեթ.

2. Գնորդի կողմից հայտարարվել է, որ մատակարարված փաթեթների առաջին խմբաքանակը ընդունվել և հաշվի առնելով ծրագրի իրականացման շրջանակներում սննդի ապահովման հրատապությունը և հույժ անհրաժեշտությունը, իսկ հաջորդ օրը՝ 2019թ մայիսի 18-ի առավոտյան մատակարարված սննդի փաթեթների երկրորդ խմբաքանակն առանց զննման և համապատասխան ստուգումների հետ է վերադարձվում սնունդի պատրաստումը ոչ սանիտարահիգիենիկ պայմանաննրում իրականացվելու պատճառաբանմամբ.

3. Գնորդի կողմից հայտարարվում է, որ փաթեթների բաշխման համար բանվորներ չեն տրամադրվել, սակայն այդ հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը.

4. Գնորդի կողմից հայտարարվում է, որ պիտանելիության ժամկետը պետք է նշված լիներ ընդհանուր փաթեթի վրա, սակայն նշված է եղել միայն սենդվիչի վրա, հաշվի չառնելով, որ փաթեթում ներառված մնացած բոլոր ապրանքի վրա առկա են արտադրողի կողմից արված համապատասխան մակնշումները.

5. Սննդի փաթեթները ընդունելուց հետո, առանց համապատասխան ուսումնասիրությունների Գնորդի կողմից հայտարարվում է, որ պանրի մի մասը և ապխտած երշիկն ամբողջությամբ չեն համապատասխանել Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և ձեռք բերված պայմանավորվածություններին.

6. 2019թ մայիսի 17-ին մատակարարված 1944 հատ սննդի փաթեթի հանձնման-ընդունման փաստաթղթերը վավերացվել են քաղաքապետարանի կողմից առանց անհամապատասխանությունների վերաբերյալ որևէ մեկնաբանության.

Ընկերությունը նշել է նաև, որ համաձայն Պայմանագրի 2.1.1 կետի մատակարարումը կարող էին մեկ օր ուշացվել, իչը կհամարվեր ոչ էական ուշացում և Վաճառողը հանգիստ կկարողանար իրականացնել փաթեթների պատրաստումը:

Ելնելով վերոգրյալից Ընկերությունը գտնում է, որ քաղաքապետարանի կողմից ներկայացված մեղադրանքները չեն համապատասխանում իրականությանը և Պայմանագրի միակողմանի լուծումը ոչ իրավաչափ է:

Մեկ այլ գրությամբ «Գալիմա» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

Ուսումնասիրելով Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հր. Սարգսյանի կողմից 21.06.2019թ թիվ 02/56270-ել գրությամբ ներկայացված առարկությունները Ընկերությունը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի որոշ աշխատակիցների կողմից ոչ պատշաճ կազմակերպված գործողությունների հետևանքով առաջացած խնդիրների պատասխանատվությունից խուսափելու նպատակով, փաստերը ոչ ճիշտ ներկայացնելով փորձ է կատարվում ամբողջ պատասխանատվությունը բարդել «Գալիմա» ՍՊԸ-ի վրա, «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից սնունդի մատակարարումը ծերանոցներ և մանկապարտեզներ իրականացվում է արդեն մի քանի տարի և այդ ընթացքում բացի շնորհակալական խոսքերից այլ խոսքեր չեն հնչել նրա հասցեին, ինչը խոսում է այն մասին, որ «Գալիմա» ՍՊԸ-ն իր պարտականությունները կատարում է պատշաճ, որակով և ժամանակին:

Վերոշշյալ գրության ուսումնասիրության արդյունքում եզրահանգումները ներկայացված են ստորև ըստ կետերի՝

1) Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հր. Սարգսյանը հերքում է, այն փաստը, որ 2019թ մայիսի 3-ին Երևանի քաղաքապետարանում կայացած Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հր. Սարգսյանի կողմից անցկացված ծրագրին մասնակից բոլոր կողմերի մասնակցությամբ խորհրդակցության ընթացքում քննարկվել և ձեռք է բերվել պայմանավորվածություն 2019թ մայիսի 17-ին և 18-ին Պայմանագով նախատեսված սննդի փաթեթների մատակարարման վերաբերյալ, համաձայն որի նշված օրերին մատակարարվելիք սննդի փաթեթների ծավալների վերաբերյալ Վաճառողը պետք է

տեղեկացվեր մատակարարումից 10 (տասը) օր առաջ, սակայն եթե եղել են հստակ պայմանավորվածություններ 2019թ. մայիսի 17-ին և 18-ին մատակարարվելիք ծավալների վերաբերյալ և Վաճառողը պետք է մատակարարեր 3200 փաթեթ, ապա ինչպես բացատրել 2019թ. մայիսի 15-ին ժամը 11:28-ին և 2019թ. մայիսի 16-ին ժամը 13:16 էլ փոստի միջոցով Գնորդի կողմից Վաճառողին ներկայացված մատակարարման ենթակա ծավալների մասին տեղեկատվությունը, որի ընդհանուր թիվը 3200 չի եղել (ֆայլերը կցվում են):

2) Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հր. Սարգսյանի կողմից որպես առարկություն ներկայացվել է, որ դիրքորոշումից մեջբերված պարբերությունում առկա է ձևակերպում թխվածքաբլիթների ձեռքբերումն ավելի շուտ իրականացնելու անհնարինության վերաբերյալ, այնինչ պարբերությունում նշված է թարմ և առնվազն 48 ժամ պիտանելիության ժամկետներ ունեցող սենդվիչներ և թխվածքաբլիթներ մատակարարելու նպատակով թխվածքաբլիթները և սենդվիչների պատրաստման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերումները իրականացվել են վերջին օրերին, այսինքն տվյալ առարկությունը ևս չի համապատասխանում իրականությանը և կրկին ներկայացված է խեղաթյուրված փաստերով:

3) 3-րդ կետով ներկայացված առարկությունում նշվում է, որ քննարկումների ժամանակ Մատակարարը տեղյակ է եղել, որ մայիսի 17-18-ը պետք է մատակարարվեր 3200 փաթեթ, նշելով նաև, որ մայիսի 17-ին պետք է մատակարարվեր 972 փաթեթ, իսկ մնացած մասը մայիսի 18-ին, իսկ ինչպես բացատրել այն փաստը, որ 2019թ. մայիսի 15-ին ժամը 11:28-ի մատակարարին էլ. փստի միջոցով տրամադրվել են ծավալներ, համաձայն որի 17.05.2019թ.-ին մատակարարվելիք ծավալը (ըստ ծնողների թվի) կազմել է 787 փաթեթ, իսկ 18.05.2019թ.-ի համար 263 փաթեթ, որի ընդհանուր գումարը հավասար է 1050-ի և նախորդ նիստի ժամանակ հնչեցվել է նաև, որ մնացած մասի մատակարարումները իրականացվել են բարեգործական հիմնադրամի կողմից:

4) 4-րդ կետով ներկայացված առարկության վերաբերյալ Ընկերությունը տեղեկացրել է, որ վերջինիս կողմից ներկայացված դիրքորոշման մեջ արդեն անդրադարձել են այս հարցերին և որ հիմք ընդունելով Պայմանագրով նախատեսված մատակարարման ենթակա ծավալները, ժամանակին մատակարարումները իրականացնելու նպատակով

Վաճառողի կողմից նախապես գնվել և պահեստավորվել են համապատասխան քանակի հյութ, սուրճ, ջուր և անձեռոցիկ (յուրաքանչյուրից 3200 հատ), իսկ թարմ և առնվազն 48 ժամ պիտանելիության ժամկետներ ունեցող սենդվիչներ և թխվածքաբլիթներ մատակարարելու նպատակով թխվածքաբլիթները և սենդվիչների պատրաստման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերումները իրականացվել են վերջին օրերին՝ սկսած 2019թ. մայիսի 15-ից և եթե 2019թ. մայիսի 15-ին ժամը 11:28-ի Վաճառողին ներկայացվում է ծավալ, ապա այդ ծավալը պետք է նախապես բազմապատկված երկուսով ներկայացվի, այլ ոչ թե դա պահանջեն Վաճառողից, ինչ վերաբերում է իրենց կողմից անընդմեջ նշվող 3200 հատ հյութի, սուրճի, ջուրի և անձեռոցիկի պահեստավորմանը, որով կրկին փորձում են շեղել ուշադրությունը, կրկին անգամ Ընկերությունը տեղեկացնում է, որ խոսքը ոչ թե 3200 հատ հյութի, սուրճի, ջուրի և անձեռոցիկի մասին է այլ սենդվիչների, որի պատրաստման համար անհրաժեշտ է բավականին ժամանակ և քաղաքապետարանի որոշ աշխատակիցների անկազմակերպ աշխատանքի արդյունքում առաջացել են խնդիրներ:

5) 5-րդ կետով ներկայացված առարկությունների վերաբերյալ Ընկերությունը հայտնել է, որ քաղաքապետարանի աշխատակիցների կողմից իրականացված նկարահանումները չեն համաձանեցվել Վաճառողի հետ և չեն ասել նաև, որ ցանկանում են մտնել և ֆիքսել Վաճառողի աշխատանքը, այլ այցելելով գրասենյակ Վաճառողի համապատասխան աշխատակիցն ինքն է հրավիրել նրանց գրասենյակ իսկ սենդվիչների պատրաստումը և առաքումն իրականացվել է այլ իրավաբանական անձի կողմից (պայմանագիրը և հաշիվ ապրանքագիրը կցվում է), ինչի վերաբերյալ Ընկերությունն արդեն իր դիրքորոշումը հայտնել է:

6) 6-րդ կետով ներկայացված առարկության վերաբերյալ Ընկերությունը հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշման մեջ ներկայացված փաստերը հիմնավորելու նպատակով վերջինս պատրաստ է ստորագրել համապատասխան փաստաթղթեր և վերծանել ու հրապարակել տվյալ հեռախոսազրույցը:

7) 7-րդ կետով ներկայացված առարկության վերաբերյալ Ընկերությունը հայտնել է, որ կրկին անգամ խեղաթյուրելով փաստերը փորձում են ներկայանալ իրենց համար շահեկան դիրքերից, ինչի մասին խոսում է նաև այն հանգամանքը, որ իրենց նշմամբ ոչ

սանիտարահիգիենիկ պայմաններում պատրաստված սնունդը նրանք թույլ են տվել բաժանել ծնողներին, ստորագրել են այդ մասով հանձնման-ընդունման փաստաթղթեր և փոխանցել գումարը, Ընկերությունը հարկ է համարում նշել նաև, որ Գնորդի գործողությունները չեն բխում 15.05.2019թ. կնքված N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով պայմանագրով սահմանված դրույթներից, այսինքն առաջին փուլի ապրանքը ընդունում են, իսկ երկրորդ փուլի ապրանքն առանց զննելու չեն ընդունում, մինչդեռ՝

Պայմանագրի համաձայն՝

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի.

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

8) 8-րդ կետով ներկայացված առարկության վերաբերյալ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

1.Գնորդի կողմից ներկայացվում է, որ նրանք զգուշացրել են Վաճառողին, որ նա դադարեցնի սննդային փաթեթների մատակարարումը, սակայն Վարդենիսում ընդունում են այդ փաթեթները հերիք չի, նաև վճարում են դրա համար, ինչը խոսում է այն մասին, որ քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները առնվազն չի համապատաս-խանում իրականությանը:

2. Գնորդի կողմից հայտարարվում է, որ մատակարարված փաթեթների առաջին խմբաքանակը ընդունվել և հաշվի առնելով ծրագրի իրականացման շրջանակներում սննդի ապահովման հրատապությունը և հույժ անհրաժեշտությունը, իսկ հաջորդ օրը՝ 2019թ մայիսի 18-ի առավոտյան մատակարարված սննդի փաթեթների երկրորդ խմբաքանակն առանց զննման և համապատասխան ստուգումների հետ է վերադարձվում սնունդի պատրաստումը ոչ սանիտարահիգիենիկ պայմաններում իրականացվելու պատճառաբանմամբ, ինչը նույնպես խոսում է քաղաքապետարանի կողմից փաստերի խեղաթյուրման մասին:

3. Վաճառողի կողմից բանվորների ներգրավումը կարող է ֆիքսված լինել նաև քաղաքապետարանի տեսաձայնագրման համակարգերով:

4. Գնորդի կողմից հայտարարվում է, որ պիտանելիության ժամկետը պետք է նշված լիներ ընդհանուր փաթեթի վրա, սակայն նշված է եղել միայն սենդվիչի վրա, հաշվի չառնելով, որ փաթեթում ներառված մնացած բոլոր ապրանքի վրա առկա են արտադրողի կողմից արված համապատասխան մակնշումները:

5. Սննդի փաթեթները ընդունելուց հետո, առանց համապատասխան ուսումնասիրությունների Գնորդի կողմից հայտարարվում է, որ պանրի մի մասը և ապխտած երշիկն ամբողջությամբ չեն համապատասխանել Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և ձեռք բերված պայմանավորվածություններին՝ կից ներկայացնում եմ այդ օրերին ձեռք բերված պանրի և երշիկի հաշիվ-ապրանքագրերը:

6. 2019թ մայիսի 17-ին մատակարարված 1944 հատ սննդի փաթեթի հանձնման-ընդունման փաստաթղթերը վավերացվել են Երևանի քաղաքապետարանի կողմից առանց անհամապատասխանությունների վերաբերյալ որևէ մեկնաբանության

Ելնելով վերոգրյալից Ընկերությունը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված մեղադրանքները չեն համապատասխանում իրականությանը, Պայմանագրի միակողմանի լուծումը ոչ իրավաչափ է և Վաճառողը դրա պատճառով կրել է ֆինանսական և բարոյական վնասներ:

Վաճառողը հաշվի առնելով զինվորների և նրանց ծնողների գործոնը Վաճառողի կողմից արվել է հնարավորինը սահմանված ժամկետներում մատակարարումները ապահովելու համար, սակայն Երևանի քաղաքապետարանի կողմից սխալ

կազմակերպված գործողությունների հետևանքով այսօր փորձ է կատարվում ոտնահարել Վաճառողի բարի համբավը և ամբողջ պատասխանատվությունը բարդել նրա վրա:

«Գալիմա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/81 ընթացակարգի շրջանակներում 11.06.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.05.2019թ. թիվ 01/61-10033 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև 15.05.2019թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Ընկերության կողմից ապրանքի մատակարարման ընթացքում արձանագրվել են մի շարք խախտումներ, մասնավորապես՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանել Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին: Համաձայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գրության.

- Մեկ անձին տրամադրվող փաթեթում ներառված ամբողջ սնունդը պետք է համապատասխաներ սննդի /48 ժամ և ավելի/ պիտանելիության ժամկետի պահպանմանը, որպես պարտադիր պահանջ, ամբողջությամբ փաթեթավորված մեկ բաժինն իր մեջ պետք է պարունակեր սենդվիչ մեկ հատ պանրով, մեկ հատ ապխտած երշիկով, մեկ հատ ջուր, հյութ, սուրճ, թխվածքաբլիթ, անձեռոցիկ, սակայն 48 ժամ պիտանելիության ժամկետ նշվել էր միայն հացի համար, փաթեթներն ամբողջական

պատրաստ չէին, փաթեթում ներառված ապրանքները տրամադրվում էր առանձին-առանձին՝ հանգեցնելով մի շարք անհարմարությունների փաթեթների հետագա բաշխման ընթացքում: Սենդվիչների պանրի մի մասը և ապխտած երշիկն ամբողջությամբ չեն համապատասխանել պահանջվող չափանիշներին /որոնց տեսականու վերաբերյալ Պատվիրատուի կողմից հստակ պահանջ է ներկայացվել/ և այլն,

- ԼՂՀ և ՀՀ սահմանամերձ զորամասերում ծառայող երևանաբնակ զինծառայողների ծնողների տեսակցության ամենամյա միջոցառման ծրագրի իրականացման շրջանակներում անհրաժեշտ սննդի փաթեթները պետք է տրամադրվեին մեկնելու օրը՝ ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում՝ սույն թվականի մայիսի 17-ին, ժամը 18:00-ին, ամբողջ թվաքանակով, ինչը չի կատարվել: 17.05.2019թ. ապրանքների առաջին խմբաքանակը՝ առանց ապրանքների ամբողջական կոմպլեկտավորման, տրամադրվել է ժամը 20:30-ի սահմաններում, ոչ ամբողջ խմբաքանակով, ապրանքի որոշ խմբաքանակ մատակարարվել է երեկոյան ժամը 23:00-ին / ի դեպ ավտոբուսները սննդի ուշացման պատճառով մեկնել են մեկ ժամ ուշացումով/, իսկ ավտոբուսների մեկնման ժամանակ շուրջ 200 փաթեթ մատակարարված չի եղել, որը հեռախոսային բանակցություններից հետո, դարձյալ չկոմպլեկտավորված, ճանապարհին է փոխանցվել Պատվիրատուին՝ այդպիսով խախտելով նաև Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման վայրը.

- Ընկերությունն ենթադրյալ արտադրամաս այցելության ընթացքում պարզվել է, որ մատակարարվող սնունդը պատրաստվում է սանիտարահիգիենիկ անթույլատրելի պայմաններում, որևէ աշխատակցի հանդերձանք չէր համապատասխանում սննդի հետ աշխատելու չափորոշիչներին, նախօրոք պայմանավորված երշիկի և պանրի տեսականու փոխարեն ուրիշ մակնշման ապրանք էր փաթեթավորվում /նկարները կցվում են/.

Վերը նշված փաստացի հանգամանքերից ելնելով և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.4 կետի «ա» ենթակետը՝ Ընկերության կողմից 18.05.2019թ. մատակարարված ապրանքները չեն ընդունվել, իսկ 17.05.2019թ. մատակարարված ապրանքներն ընդունվել են՝ հաշվի առնելով ծրագրի իրականացման շրջանակներում սննդի ապահովման հրատապությունը և հույժ անհրաժեշտությունը՝ չնայած վերոհիշյալ խախտումների:

Պատվիրատուն վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ, 408-րդ հոդվածները և 466-րդ հոդվածի 3-րդ մասը, Պայմանագրի 2.1.7-րդ կետի «ա» ենթակետը:

Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը փաստացի չի կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Պատվիրատուն միակողմանի մասնակից (Պայմանագրի չկատարված մասի՝ 886 736 ՀՀ դրամ գումարի չափով) հրաժարվել է Ընկերության հետ կնքված ապրանքի պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի մասնակի լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու համար համար կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Երևանի քաղաքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 21.06.2019թ. թիվ 02/56270-ել գրությամբ «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշման վերաբերյալ հայտնել է հետևյալը.

1. Մեջբերում դիրքորոշումից – 2019թ. մայիսի 3-ին Երևանի քաղաքապետարանում կայացած Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հր. Սարգսյանի կողմից անցկացված ծրագրին մասնակից բոլոր կողմերի մասնակցությամբ խորհրդակցության ընթացքում քննարկվել է և ձեռք է բերվել պայմանավորվածություն 2019թ. մայիսի 17-ին և 18-ին Պայմանագրով նախատեսված սննդի փաթեթների մատակարարման վերաբերյալ, համաձայն որի նշված օրերին մատակարարվելիք սննդի փաթեթների ծավալների վերաբերյալ Վաճառողը պետք է տեղեկացվեր մատակարարումից 10 (տասը) օր առաջ:

Առարկություն - Խորհրդակցության ժամանակ նման պայմանավորվածություն չի եղել, որին վկա են եղել բոլոր մասնակիցները, ինչ վերաբերում է Պայմանագրով նախատեսված 10 օր առաջ տեղյակ պահելուն, պայմանագրում նման կետ գոյություն չունի:

2. Մեջբերում դիրքորոշումից - Հիմք ընդունելով Պայմանագրով նախատեսված մատակարարման ենթակա ծավալները, ժամանակին մատակարարումները իրականացնելու նպատակով Վաճառողի կողմից նախապես գնվել և պահեստավորվել են համապատասխան քանակի հյութ, սուրճ, ջուր և անձեռոցիկ (յուրաքանչյուրից 3200 հատ), իսկ թարմ և առնվազն 48 ժամ պիտանելիության ժամկետներ ունեցող սենդվիչներ և թխվածքաբլիթներ մատակարարելու նպատակով թխվածքաբլիթները և սենդվիչների

պատրաստման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերումները իրականացվել են վերջին օրերին՝ սկսած 2019թ. մայիսի 15-ից:

Առարկություն - Տրամադրված թխվածքաբլիթները «Դարոյնք» հրուշակեղենի ձեռնարկության արտադրանքի էին, որոնց պիտանելիության ժամկետը ըստ «Դարոյնք»-ի ներկայացրած 30 օր, ինչը փաստում է, որ թխվածքաբլիթների ձեռքբերումը չէր կարելի ավելի շուտ կազմակերպել ձևակերպումը հերթական ոչ հավաստի տեղեկատվության ներկայացում է:

3. Մեջբերում դիրքորոշումից - Մատակարարումը ժամանակին և պատշաճ որակով իրականացնելու նպատակով Վաճառողը անընդհատ փորձել է քաղաքապետարանի համապատասխան աշխատակցից ճշտել մատակարարվելիք սննդի փաթեթների ծավալները, սակայն ծավալները տրամադրվել են միայն 2019թ. Մայիսի 15-ին ժամը 11:28, համաձայն որի 17.05.2019թ-ին մատակարարվելիք ծավալը (ըստ ծնողների թվի) կազմել է 787 փաթեթ, իսկ 18.05.2019թ.-ի համար 263 փաթեթ, որի ընդհանուր գումարը հավասար է 1050-ի:

Առարկություն – Այստեղ ևս կան մի քանի անհամապատասխանություն, քանի որ ըստ իրենց ներկայացված դիրքորոշման առաջին պարբերության՝ (պետք է մատակարարվեր 3200 սննդի փաթեթ) Վաճառողը տեղյակ է եղել ամբողջ ծավալի մասին և բազմիցս արձանագրության մեջ ներկայացված քննարկումների մասին խոսվել է ծավալների մասին, իսկ ներկայացված թվերը իրականում 2019 թվականի մայիսի 17 -ին պետք էր տրամադրվեր 972 փաթեթ, մնացածը մայիսի 18-ին:

4. Մեջբերում դիրքորոշումից – Վաճառողի կողմից ձեռք են բերվել պայմանավորվածություններ և նույն օրը՝ 2019թ մայիսի 15-ին իրականացվել է 1050 փաթեթի համար անհրաժեշտ սենդվիչների պատրաստման նյութերի և թխվածքաբլիթների ձեռքբերումը, սակայն հեռախոսային խոսակցության ժամանակ պարզվել է, որ այդ թիվը պետք է բազմապատկվի երկուսով, քանի որ մասնակիցների սնունդը պետք է տրամադրվեր ինչպես գնալուց, այնպես էլ վերադառնալիս: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը Վաճառողի կողմից 2019թ. մայիսի 16-ի առավոտյան (քանի որ 15-ին արդեն իսկ հնարավոր չէր) իրականացվում են ևս նույն քանակի ձեռքբերումներ և քանի որ, Վաճառողը սենդվիչների պատրաստման համար այլ

իրավաբանական անձի հետ ձեռք էր բերել պահմանավորվածություններ, (մասնավորապես՝ համաձայն կազմակերպությունների միջև կնքված պայմագրի սենդվիչի նյութերը տրամադրվում են Վաճառողի կողմից, իսկ այդ նյութերով սենդվիչների պատրաստման ծառայությունները իրականացվում են տվյալ կազմակերպության կողմից) Վաճառողը փորձում է այդ քանակի սենդվիչների պատրաստումը ևս իրագործել: 2019թ. մայիսի 16-ին ժամը 13:16 քաղաքապետարանի կողմից Վաճառողի էլ փոստի հասցեին ուղարկվում է նոր նամակ, նախկին ծավալների ոչ էական փոփոխմամբ: 2019թ. Մայիսի 17-ին ժամը 14:00-15:00 սահմաններում քաղաքապետարանի համապատասխան աշխատակիցը հեռախոսազանգի միջոցով Վաճառողին խնդրում է ևս 370 փաթեթ ավելացնել: Վաճառողը փորձելով աջակցել քաղաքապետարանին համաձայնում է այդ պատվերը ևս իրականացնել և կրելով ֆինանսական վնասներ շուկայից ձեռք է բերում համապատասխան նյութերը և անում հնարավորինը փորձելով ապահովել սննդի մատակարարումը մինչև ավտոբուսի մեկնումը: Վաճառողը և սենդվիչները պատրաստող կազմակերպության ամբողջ անձնակազմը բարձր դասելով զինվորների և նրանց ծնողների գործոնը, չխնայելով ֆինանսական և այլ ռեսուրսներ, մինչև ժամը 23:00 փորձում են իրականացնել ամբողջ ծավալի պատրաստումը և մատակարարումը, սակայն մինչև նշված ժամը ստացվում է մատակարարել միայն 1744 փաթեթը, իսկ 200 փաթեթի հանձնումը իրականացվում է Վարդենիսում՝ գիշերը ժամը 01:00-02:00 ընկած ժամանակահատվածում:

Առարկություն – Այս պարբերության մեջ ներկայացված իբր հեռախոսային խոսակցության ժամանակ է պարզվել, որ սննդամթերքի առաջին խմբաքանակը պետք է բազմապատկվի երկուսով՝ այսինքն ամեն ծնողին 2 սննդային փաթեթի տրամադրում. հնարավոր չէ այս դիտարկումը քանի որ դրա մասին խոսվել է բազմիցս, քաղաքապետարանում կայացած քննարկումների ժամանակ, և իրենց ներկայացված դիրքորոշման առաջին պարբերության մեջ իրենք նշում են 3200 փաթեթի մասին, որը իր մեջ ներառում է և գնալուց և վերադառանլուց սննդային փաթեթների ապահովման մասին: Ինչ վերաբերում է սննդային ծավալի (ոչ էական փոփոխման) մասին, որը ըստ իրենց կազմում է 370 փաթեթ՝ չի համապատասխանում իրականությանը /նշվել է փոփոխված տարբերակում ընդամենը 156 փաթեթ/ քանի որ, ըստ իրենց ներկայացրած երրորդ

պարբերության՝ իրենք արդեն ձեռք էին բերել 3200 հյութ, սուրճ, ջուր և անձեռոցիկ, այսինքն մնում էր միայն սենդվիչների պատրաստումը՝ որը արդյունավետ աշխատանքների կազմակերպման դեպքում կարելի էր ամբողջությամբ մատակարարել, սակայն չի մատակարարվել, ավելին չի մատակարարվել նույնիսկ իրենց մոտ արդեն առկա սննդամթերքները պայմանավորված ժամկետին: Չի համապատասխանում նաև այն մասը թե փորձել են աջակցել քաղաքապետարանին, իրենք են խնդրել ժամանակ քաղաքապետարանից, որ ժամը 18:00-ի փոխարեն ժամը 20:00-ին մատակարարեն, ինչը Երևանի քաղաքապետարանը որպես աջակցություն համաձայնեց, բայց տվյալ պայմանավորվածությունն նույնպես խախտվել է, ինչպես նշված է արձանագրության մեջ և ինչպես նշել է Վաճառողը իր դիրքորոշման մեջ նույնպես երևում է իրենց կողմից թույլ տված մատակարարման վայրի և ժամկետների հետ կապված բազմաթիվ խախտումները:

5. Մեջբերում դիրքորոշումից – 2019թ. մայիսի 17-ին ժամը 23:00-ի սահմաններում քաղաքապետարանի աշխատակիցները այցելում են Վաճառողի պահեստ և գրասենյակ, որտեղ տեսնելով արկղեր, երշիկի, պանրի և այլ մնացորդներ եզրակացնում են, որ սենդվիչները պատրաստվում են տվյալ վայրում, սակայն տվյալ վայրում իրականացվում էր սննդի ընդհանուր փաթեթի կազմումը և դասավորումը, բեռնումը և մատակարարումը, այսինքն սենդվիչները պատրաստող կազմակերպությունից պահեստ էր ուղարկվում արդեն պատրաստված սենդվիչները, որոնք դրվելով ընդհանուր սննդի փաթեթի մեջ ներառելով հյութ, թխվածքաբլիթ, սուրճ, ջուր և անձեռոցիկ բեռնվում էին համապատասխան մեքենաները և ուղարկվում Գնորդին:

Առարկություն – Վաճառողը նշում է, որ քաղաքապետարանի աշխատակիցները այցելել են պահեստ և գրասենյակ, սխալ եզրակացություն են կազմել սննդային փաթեթների պատրաստման վայրի վերաբերյալ, այս մասով կան հիմնավոր փաստեր որոնք ներկայացված են մանրամասն արձանագրության մեջ և ներկայացված են համապատասխան նկարները, որոնք նկարահանվեցին Պատվիրատուի աշխատակցի կողմից Վաճառողին զգուշացնելուց հետո, որ Պատվիրատուն ցանկանում է տեսնել արտադրամասը և ֆիքսել ինչպես է իրականացվում աշխատանքները:

6. Մեջբերում դիրքորոշումից – 2019թ մայիսի 17-ի գիշերը, մոտ ժամը 01:00-ի սահմաններում, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքի

սոցիալական ապահովության վարչության պետ՝ Ռ. Զաքարյանի հետ տեղի ունեցած հեռախոսազրույցի համաձայն (վերջինիս կողմից հաստատվում է մայիսի 18-ի պատվերը) 2019թ. մայիսի 18-ի առավոտյան ժամը 07:00-ին Վաճառողի կողմից մատակարարվում և ավտոբուսներում բաշխվում են համապատասխան ծավալի սննդի փաթեթներ, սակայն Երևանի քաղաքապետի տեղակալ Հր. Սարգսյանի հրահանգով (առանց տվյալ խմբաքանակի համապատասխանությունը ստուգելու) այդ ապրանքները հետ են հավաքվում ավտոբուսներից և վերադարձվում Վաճառողին հիմնավորելով, որ դրանք պատրաստված են ոչ սանիտարահիգենիկ պայմաններում և չեն կարող ընդունվել:

Առարկություն - Դիրքորոշման մեջ նշված հանգամանքը, որ «2019թ. մայիսի 17-ի գիշերը մոտ ժամը 01:00-ի սահմաններում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության պետ Ռ. Զաքարյանի հետ տեղի ունեցած հեռախոսազրույցի համաձայն վերջինիս կողմից հաստատվում է մայիսի 18-ի առավոտյան ժամը 07:00-ին համապատասխան ծավալի սննդի փաթեթների» մատակարարման հարցը, Պատվիրատուն տեղեկացնում է, որ այն բացարձակապես փաստերի խեղաթյուրում է, քանի որ, նախ՝.

ա/ մինչև Վարդենիս սննդի մնացյալ փաթեթների տեղ հասնելու հետ կապված հեռախոսային քննարկման ժամանակ Դ. Հովհաննիսյանը Ռ. Զաքարյանին հարցրել է մայիսի 18-ի առավոտյան ժամը 07:00-ին սննդի փաթեթների ծավալների վերաբերյալ, որին պատասխանվել է, որ այդ հարցը և հստակ ծավալները տվյալ պահին կարող է ճշտել սննդի կազմակերպման պատասխանատու հանդիսացող սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Լ. Հովհաննիսյանի հետ /խոսակցությանը ներկա է եղել նաև Երևանի քաղաքապետի խորհրդական Ա.Սարգսյանը, որը նույնպես սննդի մատակարարման հետ կապված հարցերով մինչ մեկնելը և մեկնումից հետո ճանապարհին անընդհատ կապ է հաստատել Դ. Հովհաննիսյանի հետ/:

բ/ Բացի այդ՝ Դ. Հովհաննիսյանի պատճառաբանությունը հերքվում է հենց իր ներկայացրած «Դիրքորոշման» մեջ, քանի որ եթե նա նշում է, որ «...մայիսի 17-ին ժամը 23:30-ի սահմաններում Երևանի քաղաքապետարանի աշխատակիցներն այցելել են իրեն...», ապա ինչու էր Դ. Հովհաննիսյանը փորձում Ռ.Զաքարյանի հետ ժամը 01:30-ին ճշտել հաջորդ օրվա մատակարարվելիք սննդի ծավալները, եթե Երևանի

քաղաքապետարանի աշխատակցի կողմից տեղում տեսնելով իրավիճակը Դ. Հովհաննիսյանին տեղեկացվել է որ /հիմք ընդունելով ըստ պայմանագրի՝ մատակարարման խախտումները և տեղում արձանագրվածը/ չեն կարող ընդունվել մայիսի 18-ի համար նախատեսված ոչ սանիտարահիգիենիկ պայմաններում փաթեթավորվող սնունդը, որի վերաբերյալ Ռ. Զաքարյանը տվյալ պահին տեղեկացված չի եղել, քանի որ որպես ծնողներին ուղեկցող պատասխանատու մեկնում էր Ղարաբաղ:

7. Մեջբերում դիրքորոշումից – Այսպիսով, կրելով ֆինանսական վնասներ, բայց հաշվի առնելով զինվորների և նրանց ծնողների գործոնը Վաճառողի կողմից արվել է հնարավորինը սահմանված ժամկետներում մատակարարումները ապահովելու համար, սակայն քաղաքապետարանի կողմից սխալ կազմակերպված գործողությունների հետևանքով այսօր փորձ է կատարվում ոտնահարել Վաճառողի բարի համբավը և ամբողջ մեղքը գցել նրա վրա:

Առարկություն – Այս դեպքում Վաճառողը ոչ մի բարոյական իրավունք չունի շահարկել զինվորների և նրանց ծնողների գործոնը, քանի որ իրեն կողմից բացարձակ անպատասխանատու և թափթփված վերաբերմունքի պատճառով կարող էր տուժել նման կարևոր ծրագրի իրականացումը, ինչը քաղաքապետարանի կողմից կանխվեց համապատասխան լուծումների շնորհիվ: Ինչ վերաբերում է Վաճառողի բարի համբավի մասին միայն ինտերնետային միջավայրում հարցում անելով «Գալիմա» ՍՊԸ-ի մասին, Պատվիրատուն տեղեկացնում է իրեն կողմից թույլ տված բազմաթիվ նման խախտումների մասին, ինչպես նաև դատական պրոցեսների վերաբերյալ:

8. Մեջբերում դիրքորոշումից – Անհասկանալի է նաև Գնորդի պահվածքը հետևյալ դրվագներում՝

Առարկություն – ներկայացված կետերի վերաբերյալ

1. Ներկայացված դրվագը Վաճառողը կատարել է իր կամքով, չնայած քաղաքապետարանի այցից հետո ստացած զգուշացման, որ դադարեցնի նման որակի սննդային փաթեթների մատակարարումը:

2. Այս մասով Պատվիրատուն արդեն պատասխանել է արձանագրության մեջ հիմնավորելով կայացված որոշման մասին

3. Գնորդը բանվորներ չի տրամադրել, ամբողջ բաշխումը կատարվել է քաղաքապետարանի աշխատակիցների կողմից, ինչի վերաբերյալ կան բազմաթիվ փաստեր և վկաներ

4. Նշված մասը քաղաքապետարանի կողմից ներկայացվել է, որ սենդվիչների վրա դրված պիտանելության ժամկետը վերաբերել է միայն սենդվիչի հացին, իսկ մեջի պարունակող սննդամթերքի մասին ոչ մի նշում չի եղել: /ներկայացված նկարների մեջ կա այս փաստը/

5. Այս կետում նշվածը փաստում են բազմաթիվ քաղաքապետարանի աշխատակիցներ, ովքեր ծրագրում ներկայցված են որպես ուղեկցողներ, որոնք մեզ ներկայացրեցին սենդվիչների մի քանի նմուշներ, որոնց մեջ կային բազմաթիվ խախտումներ, ինչը արձանագրվեց ֆոտոներով

6. Բազմաթիվ դժգոհություններից և մեկնաբանություններից հետո քաղաքապետարանը պատշաճ իրականացրել է իր վրա դրված պարտականությունները:

Ելնելով արձանագրված և հավաստի փաստերով ներկայացված, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակցի կողմից նիստի ժամանակ ներկայացված այն հանգամանքը, որ բոլոր խախտումները կարող են փաստել բազմաթիվ վկաներ՝ Վաճառողի կողմից ներկայացված մեղադրանքները և արդարացումները չեն համապատասխանում իրականությանը:

Ըստ ինտերնետային տեղեկատվական հարթակից ստացված ինֆորմացիայի, «Գալիմա» ՍՊԸ-ն մատակարարում է ծերանոցներ և մանկապարտեզներ ինչի կապակցությամբ Երևանի քաղաքապետարանը գտնում է, որ նման անպատասխանատու մատակարարների չպետք է թույլ տալ մասնակացելու գնումների՝ այսպիսի ծրագրերին առնչվող մրցույթներին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/81 ընթացակարգի շրջանակներում 11.06.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/81 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/81 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև 15.05.2019թ. կնքվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. «Գալիմա» ՍՊԸ-ին ուղղված 24.05.2019թ. թիվ 61/9824 գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.06.2019թ. թիվ 26/26-1/9252-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 29.05.2019թ. թիվ 01/61-10033 և 21.06.2019թ. թիվ 02/56270-ել գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Երևանի քաղաքապետարանի և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև 15.05.2019թ. կնքվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված

սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով, Ընկերությունը պարտավորվել է 2019թ. 2-րդ եռամսյակում, 16.05.2019թ. մինչև 26.05.2019թ. Արգիշտի 1 հասցեում համապատասխան օրը, ժամին ապահովել 3200 հատ սննդային ծանրոցի մատակարարումը:

Նույն հավելվածի համաձայն՝ մասնակիցը պարտավորվել է նախապես համաձայնեցնել ամբողջ գործընթացը պատվիրատուի հետ:

Ընկերությանն ուղղված 20.05.2019թ. թիվ 34/9374 գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ համաձայն Պայմանագիր, ինչպես նաև Ընկերության հետ Երևանի քաղաքապետարանում կայացած բազմաթիվ հանդիպումների ժամանակ /այդ թվում 03.05.2019թ. Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի կողմից անցկացված ծրագրին մասնակից բոլոր կողմերի մասնակցությամբ խորհրդակցության ընթացքում/ քննարկվել և պայմանավորվածություն է ձեռքբերվել Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել Պայմանագրի հ.1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները, որոնք ըստ տեխնիկական բնութագրի պետք է համապատասխանեն Պատվիրատուի կողմից ընտրված ապրանքների, դրանց պիտանելիության ժամկետի, պատշաճ որակի պահանջներին:

Համաձայն վերը նշվածի՝ Ընկերությունը պարտավորված է եղել 17.05.2019թ. ժամը 18:00-ին Երևանի քաղաքապետարան ներկայացնել թվով 1944 սննդային փաթեթներ, իսկ 18.05.2019թ. առավոտյան ժամը 07:00-ին մնացյալ փաթեթները:

17.05.2019թ. ապրանքների առաջին խմբաքանակն առանց ապրանքների ամբողջական կոմպլեկտավորման՝ Երևանի քաղաքապետարան է հասել ժամը 20:30-ին ոչ ամբողջ խմբաքանակով, այնուհետև անընդհատ լարվածության և Ընկերության հետ կապի պարագայում տարբեր մեքենաներով մի կերպ հասցվել են Երևանի քաղաքապետարան՝ մինչև ավտոբուսների մեկնումը՝ մոտավորապես երեկոյան ժամը 23:00-ին /ի դեպ

ավտոբուսները սննդի ուշացման պատճառով մեկնել են մեկ ժամ ուշացումով/: Ավտոբուսների մեկնման ժամանակ շուրջ 200 փաթեթի ապրանքները մատակարարված չեն եղել, որը հեռախոսային բանակցություններից հետո դարձյալ չկոմպլեկտավորված Վարդենիսում միայն փոխանցվել են Պատվիրատուին, այդպիսով խախտելով նաև Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման վայրը:

Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով ծրագրի իրականացման շրջանակներում սննդի ապահովման հրատապությունը և հույժ անհրաժեշտությունը, Ընկերության կողմից մատակարարված ապրանքներն ընդունվել են չնայած առկա խախտումների:

Նույն գրությամբ Պատվիրատուն Ընկերությանը հայտնել է, որ վերջինիս կողմից պատշաճ չեն կատարվել պայմանագրային պարտավորությունները և մատակարարված ապրանքները, մասնավորապես պանրի մի մասը և ապխտած երշիկն ամբողջությամբ չեն համապատասխանել պահանջվող չափանիշներին և Պատվիրատուի պահանջներին: Միաժամանակ համաձայն տեխնիկական բնութագրի Ընկերությունը չի ապահովել բանվորներով, որոնք պետք է ապահովեին փաթեթների բաշխումն ըստ ավտոբուսների:

Բացի այդ նույն օրը՝ 23:30-ի սահմաններում Ընկերության մոտ կատարված այցելության ընթացքում արձանագրվել է, որ ամբողջ աշխատանքներն իրականացվում էին սանիտարահիգիենիկ անթույլատրելի պայմաններում, որը հիմք է հանդիսացել 18.05.2019թ. ապրանքների չընդունմանը՝ համաձայն Պայմանագրի 2.1.4-րդ կետի «ա» ենթակետի:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի, Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի օգնականի, Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի, Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության վարչության պետի և Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալի կողմից կազմված արձանագրությամբ ամրագրվել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև 15.05.2019թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել Պայմանագրի մի շարք խախտումներ՝ կապված ապրանքների՝ Պայմանագրի Տեխնիկական-բնութագիր գնման ժամանակացույցին համապատասխանելու,

ապրանքների մատակարարման ժամանակացույցի, վայրի, փաթեթավորմանը և այլ պահանջների հետ:

«Գալիմա» ՍՊԸ-ին ուղղված 24.05.2019թ. թիվ 61/9824 գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ընթացքում Պատվիրատուի կողմից արձանագրվել են մի շարք խախտումներ, մասնավորապես մատակարարված ապրանքը չի համապատասխանել Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված մի շարք պահանջներին:

Պատվիրատուն հայտնել է, որ հանգամանքներից ելնելով և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.4-րդ կետի «ա» ենթակետը՝ Ընկերության կողմից 18.05.2019թ. մատակարարված ապրանքները չեն ընդունվել, իսկ 17.05.2019թ. մատակարարված ապրանքներն ընդունվել են՝ հաշվի առնելով ԼՂՀ և ՀՀ սահմանամերձ զորամասերում ծառայող երևանաբնակ զինծառայողների ծնողների տեսակցության ամենամյա միջոցառման ծրագրի իրականացման շրջանակներում սննդի ապահովման հրատապությունը և հույժ անհրաժեշտությունը՝ չնայած վերոհիշյալ խախտումների:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը, միակողմանի մասնակի (Պայմանագրի չկատարված մասի՝ 886 736 ՀՀ դրամ գումարի չափով) հրաժարվում է Ընկերության հետ կնքված ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված:

Այսպիսով՝ Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

Պայմանագրի 2.4-րդ կետի 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 2.2 կետի 2.2.4-րդ ենթակետի համաձայն՝ գնորդը պարտավոր է ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

Պայմանագրի 2.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք գնորդն իրավունք ունի չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Այսպիսով՝ համաձայն Կողմերի միջև 17.05.2019թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրության՝ Պայմանագրի շրջանակներում «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից 17.05.2019թ. մատակարարվել է 1944 հատ սննդային ծանրոց:

Նույն արձանագրության համաձայն՝ արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ-ապրանքագիրը (Ա5763404174) և դրական եզրակացությունը հանդիսանում են նույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից 17.05.2019թ. մատակարարվել, իսկ Երևանի քաղաքապետարանի կողմից ընդունվել է 1944 հատ սննդային ծանրոց:

Այնուհետև Պատվիրատուն հրաժարվել է Ընկերության կողմից 18.05.2019թ. մատակարարվելիք սննդային ծանրոցների հաջորդ խմբաքանակից՝ լուծելով Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ***խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Ուսումնասիրելով «Գալիմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, և առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ կողմերի միջև 17.05.2019թ. կնքված թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Պատվիրատուն ընդունել է Ընկերության կողմից 17.05.2019թ. մատակարարված ապրանքի համապատասխան խմբաքանակը, իսկ 18.05.2019թ. մատակարարվելիք ապրանքը Պատվիրատուն նախապես հրաժարվել է ընդունելուց, մինչդեռ 2.1.7.1 կետի «ա» ենթակետով էական խախտման հիմքով լուծելու համար անհրաժեշտ է, որպեսզի մատակարարված լինի անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, ընդ որում Պայմանագրի 2.2 կետի 2.2.4-րդ ենթակետը սահմանում է, որ գնորդը պարտավոր է ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից, իսկ Պայմանագրի 2.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք գնորդն իրավունք ունի չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.06.2019թ. թիվ 26/26-1/9252-2019 գրությամբ «Գալիմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**